միամիտ ոչխարը եւ հովերի թեւերի վրայ շաչելով իջնում է վիրաւորուած Ցիսուսը:

Այստեղ է բանալին ամենայն բանի:

Իսկ, տես որ —

Մեզ հետ եկած ճարտարապետը մօտենում է քարերին, զննում, եւ ձեռքին բռնած մուրճի հարուածով, փրցնում մի կտոր, բացատրում, դիտական անուններ տալիս եւ գրպանը դնում:

Խեղճ այս մարմնի առջեւ կանգնել է անյայտ աչքերով եւ ծախելու ապրանք է փնտռում:

Իսկ, տես որ —

Ծերունի ճարտարապետ ակադեմականը ինձ հետ Պալլադիօի մասին է խօսում: «Ի՞նչ լաւ բան կը լինէր, ասում է, թարգմանել նրա գրուածքները ճարտարապետութեան մասին»:

Ու տես որ —

Ընկեր կոմիսարը, մատը դէպի հեռուն ցցած խօսում է նաւային երթեւեկութեան մասին: Նոր Բայազետում կարագի փութը 6 ռուբլի է, քաղաքում ճիշդ կրկինը,— ճի՛շդ կրկինը,— ու աչքերից բենզինի հոտ է դալիս, ու սրտի մէջ փոքրիկ մօթօրը սիրահարուած տրոփում է, մինչ ուղեղը թուաբանական թիւերի պտուտակի հետ հեռաւոր ջրաղացներ է դարձնում:

* * *

Վերադառնում ենք ափը: Նաւակը դեռ չի եկել:

Սեւանայ նախկին թանգարանը փակ է: Կղզին անցել է Լուսժողկոմատին եւ ամէն բան տակնուվրայ է:

Կան երկու վարդապետներ:

Մէկը, աւելի հասակաւոր, ման է դալիս թանգարանին կից պատշգամի վրայ, իսկ միւսը՝ առոյդ, բարձրահասակ մի երիտասարդ արեղայ՝ դէպի ծովը նայող ուրիշ մի պատշգամի տակ:

Հասակաւոր վանականը նայում է մեզ աչքի տակից, կասկածանքով: Բարեւում եմ, մօտենում եմ: Միավանկ պատասխաններ է տալիս:

— Վարի եկեղեցին ե՞րբ շինուած է, Հայր Սուրբ:

— Կը լինի 500 տարի:

— Վերի եկեղեցին ե՞րբ շինուած է, Հայր Սուրբ:

— Կը լինի 500 տարի:

— Իսկ է՛ն վերինը:

Մտածում է:

— Կը լինի 500 տարի:

— Թանգարանը կարելի՞ է տեսնել:

— Մեր ձեռքից առին:

— Գրադարանը, ուր Գիւտ Սրբազանը...

— Ցրիւ են տուել:

Լռութիւն: Էլ չգիտեմ՝ ի՞նչ ասել:

— Վարդապե՛տ, այստեղ լաւ ձուկեր կան, չէ՞...

— Կային:

— Փախա՞ն:

— Արգիլեցին:

— Ինչպէ՞ս թէ արգիլեցին:

— Ահա մի տարի է ձուկի երեսը տեսած չունենք: Մեզ արգիլել են ձուկ բռնել:

Քիչ յետոյ մօտենում եմ երիտասարդ արեղային: Զղայնացած քայլում է: Անհանգիստ նայուածքով, փայլուն աչքեր ունի: Համակերբելի բամբ ձայն, տխուր եւ ըմբոստ շեշտով:

— Երկու հոգի ենք, ասում է, եւ մէկ մէկի հետ չենք խօսում: Խեղճ եւ անտանելի մարդ է: Ամէն ինչ քանդուել է այստեղ. այդ մենակութիւնը զարհուրելի է:

— Ի՞նչ էք անում այստեղ. անվերջ աղօթո՞ւմ էք:

— Էլ սիրտ չմնաց՝ է՞նքան աղօթեցի:

—Ուսումնասիրո՞ւմ էք...ձեռագիրներ...

— Ամէն ինչ փակել են: Եւ ո՞վ է հիմա հետաքրքրւում այդ բաներով: Չէ՞ք տեսնում:

Քայլում է: Կոպերը ծածկում է եւ ծանր մի տրտմութիւն սեղմում:

— Տուն նամակ եմ գրել, ուզում եմ վերադառնալ: Եօթը տարի է այստեղ եմ: Եկայ ոգեւորուած, Սեւանայ կղզու հրապոյրը կուրծքիս սեղմելու համար... Էլ չեմ կարող, ուզում եմ գնայ...

— Ո՞ւր:

— Տուն: Թիֆլիս: Տուն նամակ եմ գրել:

— Լաւ, տանը ի՞նչ պիտի անէք:

Արեղան կանգ առաւ, ձեռքերը կրծքին տարաւ ու բիչ բիչ նայեց: Նայեց պարապին:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան